

## ՊԱՏՄԱ-ԲՈՒՅՈՒԹՅԱԿԵՐ

### ՊԱՊ ԱՐԵԱԿՈՒՆԻ

Դ Ա Պ Ո Ւ Խ Ա .

ՇԱՄՈՒՀ Բ .

•

#### 1. ԷՆԴԱՎԱՆՈՒՄ ԱԿՆԱԲԿ

Հայր և որդի: Արշակ և Պապ:

Որդին կը յաջորդէ հօրը Հայաստանի գահին վրայ:

Երկուքն ալ անհկուն մարտնչողներ վիմխարի: Հակառակորդներու դէմ, թէ արտաքին և թէ ներքին ճականներուն:

Ազշեցուցիչ նմանութիւններ երկուքին ալ թագաւորական գործունեութիւնը կը բնորոշին:

Զոյգ ծանրակշիռ մտահոգութիւններ երկուքն ալ կը չարչարին անդադար իրենց իշխանութեան բոլոր օրերուն:

Առաջին: Հզօր և մէկզմէկու կատաղի սխերիմ երկու զրացի կայսրութիւններու — Պարսկական և Հռոմէկական — սաղրանքներու ցանցին մէջ ինկած, պետական ինչպիսի<sup>6</sup> արտաքին քաղաքականութիւն մը հարկ է իւրացնել և վարել, որ եթէ Հայաստանի բախտին վերջ ի վերջոյն նպաստաւոր իսկ չհանդիսանայ, զոնէ նուազագոյն աստիճանի իջեցնէ անխուսափելի վրանգը:

Երկրորդ: Հայաստանի նախարարական աւագանիին և կաթողիկոսական իշխանութեան հանդէպ ի՞նչ քաղաքականութիւն որդեզրել, որպէսզի Արշակունի հնագարեան գահին հետզհետէ քայլքայուղ հեղինակութիւնը վերստին իր առաջուան անկապտելի զորութեան տիրանայ:

Հայր և որդի:

Երկուքն ալ, զեռ պատանի, իւրաքանչիւրը իր կարգին, օտար թագաւորէ մը կը ստանայ իր թագը: Հայրը կրցաւ զայն պահել մօտաւորապէս երեսուն տարի: Որդին՝ հազիւ եօթ տարի:

Երկուքն ալ կը փակին իրենց փո-

թօրկալի կեանքին զիրքը եղերական վախճանով: Վախճան՝ որ ոչ մէկ ուրիշ Արշակունի արքայի վիճակուհցաւ: Հայրը կը ստանայ սորերպական հարու ածը Պարսկականի թագաւորէն, օգնութեամբ սխերիմ հայ պարսկականի նախարարներու: Որդին՝ ահա կանգնելի վերջակէտը կ'ընդունի Հոռոմէկական կայսրէն, դաւադիր օժանդակութեամբ հայ թիւզանգաստէր նախարարներու:

Պապ թագաւորի անձը և գործունէութիւնը հասկնալու համար, անհրաժեշտ է ծանօթանալ իր հօր չըջանի անցքերուն և անձերուն:

Անկարելի է զրել Հայաստանի քաղաքական պատմութիւնը առանց հանգամանորէն անզրագառնալու հզօր զրացիներու մշակած քաղաքականութեան և փոխարարերութիւններուն: Այս առաւելապէս ճիշտ է մահաւանդ Պորորդ զարու պարագային:

Իւր աշխարհագրական զիրքին պատճառաւ հայ ժողովուրդին հայրենիքը, երկու հազար տարուայ պատմութեան ընթացքին, սկսած Մեծն Տիգրանի մահէն մինչև մեր օրերը, ենթարկուած մնաց իւրեամարտ զրացիներու արիւնլուայ մըրցակցութեան պատճառած սարսափներուն: Անմեղապարտ կռուախինձոր մը, որ իր իսկ տան մէջ ազատ չի կրնար չնչել, և կամայ ակամայ թոյլ պէտք է տայ թշնամիքանակներուն իր սահմանները սանակուինլու և իր գաւառները աւրշտկելու:

Աւ այս զրացի պետութիւնները, բացի կովկասեան ազգերէն, միշտ ալ աւելի զօրեղ հանգիսացան քան Հայաստանը:

Ահա Մեծն Տիգրանի մահուան յաջորդող տարիներուն մեզ կը զիմագրաւէ հայ քաղաքական ճակատագրի այս ողբերգական կրկէսին առաջին մրցորդ զոյզը: Պարթևաստան և Հռոմ: Այս կը տեսէ զրիթէ երեք հարիւր տարի: Յեսոյ Ստանիան Պարտկաստան և Բիւզանդիան, չորս հարիւր տարի: Ապա, Բիւզանդիան և Մահմետական իշխանութիւններ, Սրար, Անձուկ, Մանկու, Թիւրք, զրիթէ եօթ հարիւր տարի: Եւ վերջապէս, Թիւրքիա, Պարսկական, յեսոյ Ռուսիա, մինչև մեր օրերը:

Ի՞նչպէս կրնաս Հայ ժողովուրդի քաղաքական պատմութիւնը զրել առանց այս արտաքին անխուսափելի պարտազրանքի

դարաւոր և այլազան ծալքերուն ծանօթաւ նալու:

Կրնանք որոշապէս ըսել թէ բազմաշարիան այդ յամա մրցակցութեան ամենան աւելի ճգնաժամային գործօն ըրջանը եղաւ Զորբորդ գարը, մանաւանդ Արշակ և Պապ թագաւորներու իշխանութեան տարիներուն: Այնքան կատաղի, որ Պապի մահէն հազիւ տաս տարի անցած, երկու հակամարտ պետութիւններ հայկական առեղծուածը լուծելու ուրիշ կերպ չեն գտներ բացի Հայաստանը բաժնելէ երկու կայսրութիւններու միջն:

Այս բաժնումն իսկ հեռու պիտի ըլլար երկարատես խողազութեան մը գրաւականը ըլլալէ զալիք 250 տարիներու ընթացքին՝ յաշս Բիւզանդական և Պարսիկ տէրութեանց: Մակայն այդ դուրս կը մնայ մեր այս գործի առաջադրած ժամանակաշրջանէն:

Զորբորդ գարուն, Հայաստանի մէջ և շուրջ կատարուող յուղումնալի տրամին դերակատարներէն, հայ և օտարազգի, ամենէն կարեորը, չըսելու համար ահարկուն է Շապուհ Բ. Պարսկաստանի թագաւորը:

Երբ կը դիտենք Հայաստանի և Մերձաւոր Արևելքի տարածուն և խոնուած թատերաբեմին վրայ եկող գացող գործիշները, ինչպէս, Արշակ, Պապ, Ներսէս Կաթողիկոս, Փառանձեմ թագուհի, Անդովկի Սրբնի, Արշաւիր Կամուրաբական, Վասակ և Մուշեղ Մամիկոնեաններ, Մերուժան Արծունի, Կոստանդիոս Կայսր, Յուլիանոս Կայսր, Յովիանոս Կայսր, Վաղէս Կայսր, Տերենտիոս Կամս, Տրայանոս զօրավար, Բարսեղ Կեսարացի, ասոնցմէ և ո՞չ մէկը այնքան երկար մեր ուշագրութիւնը կը գրաւէ և մեր մտահոգ խորհրդածութեան առարկան կ'ըլլայ որքան Շապուհ Բ., ամենամեծը Մասանեան քսանութ արքաներուն, բացի Խոսրով Անուշերուանէն:

Մա ա՛լ աւելի երկար ապրեցաւ քան միւսները: Բոլոր կարեսոր գերակատարները մին միւսին ետեւէ մեռան, և վերջ ի վերջոյ Շապուհի կատաղի անհատականութիւնը տիրապետեց բեմին:

Ան ժամանակակիցը եղաւ ինը Հռոմէական կայսրերու, Գալլերիոս, Կոստանդիոս, Կոստանդիոս, Յուլիանոս, Յովիանոս,

Վաղենատիանոս Ա., Վաղէս, Գրատիանոս, և Վաղենատիանոս Բ.: Իսկ իր օրով Հայաստանի Արշակունի գահը յաջորդաբար զրաւեցին լինեն Տրդատ, Խոսրով, Տիրան, Արշակ Բ., Պապ և Վարազդատ:

Եթէ ըսենք թէ Շապուհ, հակառակ օտարազգի մը ըլլալուն, Հայաստանի այդ տաենուան քաղաքական պատմութեան զըլլաւոր դերակատարն է, հաստատ իրողութիւն մը չափազանցած չենք ըլլար: Իրմով կը սկսի հայկական երբեմնի պատկառազգու մարտական ուժին ջլատումը: Անոր յամառ գործունեութեան արդիւնքն է որ Հայ Արշակունիներուն հեղինակութիւնը քայքայման ճամբան կը բանէ: Հայ իշխաններու այն խումբը, որ դիւրութեան համար Պարսկական կուսակցութիւնն պիտի կռչենք յետ այսու, Շապուհի կողմէ իր ձրագրային ցացըունքները ստացած, անոր օրով կը հասնի իր աղետալի գործունեութեան արիւնակութիւնն մարիւնաներկ զագաթնակէտին: Հայ արիւն, հայ ձեռքերէ թափուած: Երկու Արշակունի թագաւորներ ինք ուղղակի կը խորտակէ, երրորդին ալ կործանման անուղղակի պատճառ կ'ըլլայ: Եւ երբ իր մահէն հայիւ հինգ տարի անցած՝ Հայաստանի մեծագոյն մասը Պարսիկ տէրութեան տակ կ'իշնայ, այս մեծ յաջողութեան վարկը և պատիւը կը պատկանի իրեն քան թէ իր զթօրէն ճարպիկ: Տեղին համեմատ երգում, չողոքորթութիւն, սպառնալիք, զրաւիչ խոստում, դաւ ու զաշնք, իր անհանդարամտքի զինարանին սիրական զէնքերը եղան արհաւրալի յիսուն տարիներու ընթացքին:

Վագր և աղուէս միաժամանակ: Շապուհ որքան ուղղամական կարողութեամբ օժտուած, նոյնքան ալ գիւանազիտական մարզին՝ խորամանկ սազրանքներու սարքաւորման մէջ հնարամիտ, նկուն, և անզթօրէն ճարպիկ: Տեղին համեմատ երգում, չողոքորթութիւն, սպառնալիք, զրաւիչ խոստում, դաւ ու զաշնք, իր անհանդարամտքի զինարանին սիրական զէնքերը եղան արհաւրալի յիսուն տարիներու ընթացքին:

Ան զիտէր բառերու խորհրդաւոր ոյժը: Զիւնուր-իւլ-թավլարիխէն առնելով՝ պատմագիրը կ'ըսէ թէ հետեւեալը Շապուհի սիրած արտայայտութիւններէն մին էր. «Բառութը կրնան աւելի կենցանացնող ըլլալ քան գարնան անձրելը, և աւելի սուր քան աւերածութեան սուրը: Նիզակի մը ծայրը կընայ քաշուիլ հանուիլ մարմնէ մը, բայց

անդութ արտայայտութիւն մը երբեք չի կրնար ջնջուիլ սրտէն զոր վիրաւորած է»<sup>(1)</sup>:

## 2. ԵՐԻՑԱՍԱՐԴԻ ՇԱՊՈՒՀ

Մանուկ Պապը ակնապիշ զարմանքով ունկնդրած ըլլալու էր Շապուհ թագաւորի մասին կրկնուած պատմութիւններուն։ Անոնք հէքեաթի մը տպաւորութիւնը ըլլած ըլլալու էին իր թերափթիթ մտքին։

Շապուհ ծնած վայրկեանէն թագաւոր էր։ Առյնիսկ ծնելէն ալ առաջ։ Եւ երկաւ կայել թէ ան ժառանգական կարգով զահ չէր կրնար բարձրանալ, եթէ Պարսիկ բարձրաստիճան իշխաններու աւագածողովը կամայական քայլով մը օրինաւոր զահաժառանգին իրաւունքը ոտնակոխ չընէր։

Շապուհի հայրը Արմիզզ Բ. երբ մեռաւ 309 թուականին<sup>(2)</sup>, արդէն չափահաս միակ զաւակ մը ունէր, Արմիզզ։ Այս երիտասարդ թագաժառանգը ատելի էր աւագանիին, թերևս իր դէպի Հելլէն մշակոյթը ցոյց տուած նախասիրութեան պատմառաւ<sup>(3)</sup>։ Անոնք որ պատմական դէպքերու և դէմքերու մասին Աթլէններու անվնաս մտամարզան քովի կ'ախորժին զքօսնուլ կըրնան ենթագրական հետևանքներու մասին խորհրդածել — մանաւանդ Հայաստանի վերաբերմամբ — ինքզինքնուն հարց տալով։ Եթէ խորամանկ, անազորյն, փառասէր, հզօր և երկարակեաց Շապուհի տեղ թոյլ տրուէր որ լուսամիտ Արմիզզը գրաւէր Պարսկաստանի զահը, արդեօք որքան տարբեր կ'ըլլար ապազայ դէպքերու լնթացքը Հայաստանի մէջ և շուրջ։ Հաւանական չէ որ խնայուէր սարսափելի աշղէտները, զորս վիճակութեցաւ հայ աշխարհին, առաւելապէս Շապուհի անդիջող, յամառ և կատազի զործունէութեան պատճառաւ։

Արմիզզ Բ. ի մահէն զիրջ, Պարսիկ իշխաններ ապստամբական ելոյթով մը, առանց այլեւայլի, ձերբակալեցին երիտասարդ

(1) Malcolm, Vol. I., էջ 110. (Եանօթութիւններու մէջ հեղինակներու անունները պիտի յիշենք և էջը կամ զլուելը՝ Գիրքերու անունները կը դուռըն հասարիս վերը զետեղուած Մատենագրութեան մէջ)։

(2) Clinton, Vol. II., էջ 260.

(3) Zosimus, էջ 106.

թագաժառանգը և բանտարկեցին զինք, իսկ կանավարութեան զեկն ալ իրենց ձեռքը առին։

Շուտով յայտնի եղաւ որ մեռած թագաւորի կիներէն մին յղի է։ Մոգերը՝ կանխագուշակելու իրենց անիմանալի կախարշական արուեստով վստահեցուցին ամէնքը թէ ձնելիք երեխան մանչ մը պիտի ըլլար։

Ի լուր այս հաւաստումին, իշխանները յղի կնոջ մահիճը փոխազրեցին զահասենեակ, և արքայական թագը մհծ հանդիսութեամբ կախելով կնոջ որովայնին վերև, ձնելիքը հոչակեցին թագաւոր<sup>(4)</sup>։

Երեխան ծնաւ։ Մանչ մը։ Անունը Շապուհ զրին։

Խնամմակալ իշխաններ իր անունով լնթագրակածաւալ տէրութեան զործերը կը վարէին։ Ամկայն երեխայի մը անուանական թագաւորութիւնը կարծես հպատակազգերէն ոմանք փորձութեան կ'ենթարկէր, մանաւանդ Միջագետքի և Պարսից Շոցի ըրջաններու Արար ցհղերը, որոնք շարունակ կ'ապատամբէին կեզրոնի կառավարութեան դէմ։ Թահիր անունով ցեղապետ մը նոյնիսկ յարձակեցաւ Տիզրոնի գրայ, մայրաքաղաքը գրաւեց, և արքական իշխանուհի մը զերի տարաւ<sup>(5)</sup>։

Ապատամբական խառնակութիւնները շարունակուեցան տասնվեց տարի։ Կրնանք ենթազրել թէ այս տարիներու լնթացքին Հայաստանի քաղաքական մթնոլորտը զերծ մնաց փոթորկալի ամպերէ, և Խոսրով կոտակ ու Տիրան թագաւորներու իշխանութիւնը, վերջինին զոնէ առաջին տարիները բաղզատաբար ազատ մնացին Արևելեան սպաննալիքէ, Միաժամանակ պատանի Շապուհ կը մարզուէր իր արքայական պաշտօնին համար։ Միրխոննա և Թապարի կը վկայէն թէ գեռատի թագաւորը արտասովոր ուշիմութիւն և ձեռներէ ցութիւն ցոյց կուտար<sup>(6)</sup>։

Տասնվեց տարեկանին՝ Շապուհ երկրին իշխանութիւնը ձեռք առաւ։ Իր զինուրական տաղանդը և կորովի քաջութիւնը ի յայտ եկան Արար ապստամբներու դէմ

(4) Mirkond, էջ 305; Tabari, Vol. II., էջ 95.

(5) Malcolm, Vol. I., էջ 107.

(6) Mirkond, էջ 307; Tabari, Vol. II., էջ 92 - 93.

## ՀԱՅՈՒԹ ԱՆՁՆԱԿԱՆԱՐԴՐԱՅԻՆ ԱՎԱՐԱՐՈՒՄ

Եւրոպացիք լայնօրէն օգտագործում են ազգանունը՝ Անունը Փրանսացց մէջ այնքան անարժէք բան է, որ անուն ասելով հասկանում են ազգանուն, իսկ անունն համար գործ են ածում փոքր անուն (petit nom): Մի անձ կարող է ունենալ 3-4 անուն, բայց միայն մի ազգանուն: Այսպէս Փարիզի իմ գասընկերներից յիշեմ՝

Edouard-Marie-Antoine-Aude.

Louis-Marie-Jean-Bodin.

Lucien-Etien-Albert-Broche.

Charles-Jean-Marie-Brou.

Pierre-Paul-Narcisse-Fernand-Chilot.

Joseph-Jean-Baptiste-Vendryès.

Այս ընդհանուր ձանօթութիւններից յիտոյ մասնաւորենք մեր խօսքը հայոց ազգանունների վրայ:

Հին հայոց մէջ հասարակ ժողովուրդը երեւի գործ ածում էր անուն-հայրանուն. իսկ ազնուականները կրում էին ազգանուն: Ազգանունները հնագոյն չըջանում ձեւանում էին ունի մասնիկով, որն աւելի ուշ դարձաւ եան. Երգ գարում հայերը պարսկիներից վերցնում են յոգնակի ան, եան (յան) մասնիկը և դարձնում են նրանց

նման ազգանուն, նոյնիսկ իդաֆիթի պարսկական օրէնքով, Ներսէս կաթողիկոսի գրած թղթի մէջ ստորագրում են ի միջի այլոց հետեւեալ իշխանները.

Համազապի ի Գուգգառամեան  
Ասմէզ յԱրտաւազզան  
Գրիգոր ի Հմայական  
Աահակ ի Վարդանան  
Գատոյ ի Գարդուղեան  
Զաւրակ ի Գաղգաւոնան  
Վարագ-Յոհան ի Յոհանան  
Վարդան ի Մուշեղեան  
Սահակ ի Հմայակեան  
Աշոտ ի Վարդգտիրոցեան  
Մուշեղ ի Հմայեկեան  
Վըրիւ յԱրտաշրան  
Սահակ ի Մանուէլեան և այլն և այլն:  
(Քիրք թղթոց, էջ 74):

Սա պարսկական ազգեցութեան չըրդանն է: Արաբների ժամանակ ազգանունները վելանում են, ըստ որում իշխանական ցեղերը ջնջում են: Աւելի ուշ՝ թուրքերի ժամանակ, նոյնպէս ազգանուն չկայ: Տաճկաստանում, իմ մանկութեանս ժա-

իր արշաւանքներու ընթացքին: Պարսից Մոցի մէջ հսկայ նաւատորմիզ մը պատրաստեց, որ իր բանակները փոխադրեց Արաբական երկիրներ: Ցեղ ցեղի ետեւէ ճըզմուցաց: Պարտուածներուն մեծամասնութիւնը սուրէ անցնել տուաւ, իսկ գերի բանուածներուն իւրաքանչիւրին ուսու ծակել տուաւ և չուան մը անցնելով քաշկըստեցին տարին գերութիւն (1):

Այս յազդութեան համար Շապուհին, որպէս պատուանուն, կոչ հցին Զուլաքած, Ուսերու Տէրը (2):

Յաղթական բանակ մը իր հրամանին

տակ, և Պարսիկ ժողովուրդի իրեն հանդէպ տած ած խանդավառ ոգկորութենէն զօտեպնդուած, երիտասարդ Արքային փառասիրութիւնը նորանոր նուաճումներու ծրագիրներով կը խթանէր իր անհանդարտ և անհամբեր միտքը!

Շապուհի համար, ինչպէս բոլոր Սասանեան թագաւորներու, առաջին ոխերիմ թշնամին Հառմէկական կայսրութիւնն էր: Պարսկաստանի արևելեան և հիւսիսային սահմաններէն անդին մէկէ աւելի բարբարոս ցեղեր կը գտնուէին, որոնք յանախ պետութեան կեանքը կը վրդովէին, բայց, որթեան կեանքը վրդովէին, բայց, որթեան կործական բաղդանաւոր, անոնցմէ եւ ոչ մէկը կրնար բաղդանաւորիլ Արևմուտքի հզօրագոյն կայսրութեան հետ:

ՀԲԱՆԴ Ք. ԱՐՄԷԿՆ

(1) Mirkhond, էջ 309.

(2) Malcolm, Vol. I, էջ 107.